**ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի**

**«Կողբի ամառային դպրոց» նախագծի**

**ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2.1. «Կողբի ամառային դպրոց» ծրագիրն անցկացվել է Կողբ գյուղում՝ Կողբի գեղարվեստի դպրոցում՝ ճամբարային պայմաններում 2023 թ. օգոստոսի 17-ից մինչև օգոստոսի 26-ը։

2.2. Կազմակերպիչների խմբի կազմը՝

Կազմակերպիչ՝ Լիլիթ Սիմոնյան

2.3. մասնակիցների (լսարանի) թիվը

Ծրագրին մասնակցել են 14-ից 18 տարեկան 29 պատանիներ Նոյեմբերյան քաղաքից, Այրում ավանից, Կողբ, Դովեղ, Բերդավան, Դեղձավան, Բագրատաշեն և Արճիս գյուղերից։ Նրանցից 8-ը լսել են ամբողջ դասընթացը (60 ժամ) և ստացել են ՀԱԻ վկայականներ։

2.4. դասախոսների թիվը և աշխարհագրությունը

ՀԱԻ 6 աշխատակիցներ (Երևան ք, Աբովյան ք.)

2.5. կազմակերպման և իրականացման ընթացքի նկարագրություն (մինչև 2 էջ)

2.5.1 Նախքան ծրագրի սկիզբը կազմակերպիչը՝ դասախոսների հետ խորհրդակցելով, կազմել է ծրագիր, որի համաձայն պետք է մասնակիցներին տրվեր հնարավորինս համապարփակ պատկերացում հայագիտության տարբեր ճյուղերի մասին։ Ծրագիրը քննարկվել է Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակիցների հետ, դրա մեջ կատարվել են ժամանակացույցի որոշակի փոփոխություններ և շտկումներ՝ տրանսպորտային տեղափոխության և այլ հարցերի կարգավորման նպատակով։

2.5.2 Նոյեմբերյանի համայնքապետարանի կանխավ տրված հայտարարությամբ՝ ծրագրին մասնակցելու համար արձագանքեցին 50-ից ավելի պատանիներ, որոնցից ընտրվեցին հայագիտության հարցերով առավել հետաքրքրվածները։ Առաջին 5 օրը մասնակիցներն անցկացրեցին ճամբարային պայմաններում, մի կողմից՝ դասախոսություններ լսելով, մյուս կողմից՝ դեպի մոտակա հուշարձանները արշավներ կատարելով։ Այս ճանապարհով նրանք գործնականում ուսումնասիրեցին այն առարկաները, որոնց տեսական մասը դասավանդեցին ՀԱԻ մասնագետները։ Վերջին 5 օրերից 2-ը նվիրվեցին դեպի Սրվեղի, Մակարավանքի, Ախտալայի և Սանահնի վանքերը ճանապարհորդություններին, իսկ 3-ի ընթացքում մասնակիցները լսեցին հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգությանը վերաբերող դասախոսություններ։ Դասախոսություններից բացի

մասնակիցները սովորեցին ժողովրդական պարեր (այդ նպատակով համայնքը տրամադրեց Կողբի մշակույթի տան տարածքը), լսեցին հայկական ժողովրդական հեքիաթներ։

Մասնակիցներին տրված էր ազատություն՝ ընտրելու այն դասաժամերը, որոնց իրենք կարող էին մասնակցել։ Այդ պատճառով ոչ բոլոր մասնակիցներն էին ներկա գտնվում բոլոր ժամերին։

2.5.3 Ծրագրի մասնակիցներին մատուցվեց ընդհանուր առմամբ 60 ժ. դասախոսություն և գործնական պարապմունք, որի մասը կազմեցին նաև արտագնա (հուշարձանների տարածքում) անցկացվող դասերը։ Կողբի ամառային դպրոցի ծրագրի մեջ ներառված էին դասախոսություններ և գործնական պարապմունքներ հետևյալ առարկաների շրջանակներում.

Հնագիտություն

Վիմագրություն

Ձեռագրագիտություն

Ազգագրություն (այդ թվում՝ ժողովրդական պար, խոհանոց)

Բանագիտություն

Արվեստագիտություն (միջնադարյան և ժողովրդական արվեստ)։

2.5.4 Արտագնա դասընթացների ընթացքում անցկացվեց մասնակիցների գիտելիքների յուրացման ոչ պաշտոնական ստուգում, որի ընթացքում նրանք կարողանում էին մոտավոր կերպով թվագրել հուշարձանները, կարդալ վիմագրերը, նկարագրել կառույցները՝ համապատասխան տերմինների օգնությամբ, բացատրել բարձրաքանդակների և որմնանկարների բովանդակությունը, վերհիշում էին համապատասխան ավանդազրույցները, աստվածաշնչյան դրվագները, սրբերի վարքաբանությունը, ներկայացնել ազգային և ժողովրդական տոների մեջ մտնող ծեսերը և այլն։

2.5.5 Ծրագրի ավարտին կազմվեց մասնակիցների համար հասանելի՝ հայագիտության տարբեր բնագավառներին վերաբերող էլեկտրոնային շտոմարան, որի մեջ մտան 100-ից ավելի թվայնացված աշխատություններ, ազգագրական և բանահյուսական նյութեր, հայկական հուշարձանների և ձեռագրերի պատկերավոր ալբոմներ։

2.5.6 Առավել ակտիվ մասնակիցներին հանձնվեցին ՀԱԻ վկայականներ առ այն, որ իրենք հաճախել են Կողբի ամառային դպրոց և լսել են 60 ժամերից կազմված դասընթացը։ Նրանք կդառնան Կողբի ապագա Հայագիտական կենտրոնի հիմնադիրներ։

Մասնակից պատանիները կիսվեցին իրենց գաղափարներով առ այն, թե ի՛նչ գործունեություն կարող է ծավալել այդ կենտրոնը, նշելով ինչպես այն առարկաները, որոնք կուզեին սովորել, այնպես էլ այն գործերը, որ պատրաստակամ են կատարել,

մասնավորապես՝ հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգության հավաքագրումը (բանահավաքչությունը) և ռադիոհաղորդումների և փողքասթների ստեղծումը հայագիտությունը լայն տարածելու նպատակով։

Կազմակերպիչ (Կատարող)՝ Լ. Սիմոնյան

01.12.2023